Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

2023-2024 ուստարի

Դասարան՝ II

Կազմող-դասվար՝ Ա. Մինասյան

## ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) - Դասարանը բաղկացած է 3 հոգուց, երեքն էլ տղաներ: Հաստատված է փոխադարձ սեր և հարգանք միմյանց նկատմամբ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Կա մեծ պատասխանատվություն և վերահսկողություն, որ աշակերտները լինեն պարտաճանաչ, պատասխանատու և դաստիարակվեն որպես լավ քաղաքացի: Դասարանում կա նաև թույլ կարողություններ ունեցող երեխա, ում հետ տարվում է լրացուցիչ աշխատանքներ: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում - Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկվեն այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն): Զարգացնել երեխաների տրամաբանական կարողությունները, հմտությունները: Դասերը անցկացնել աշակերտակենտրոն ուսուցմամբ, որի շնորհիվ կզարգանա նաև բազմաբնույթ մտածողությունը, աշակերտները ձեռք կբերեն ինքնուրույն աշխատելու, մտածելու կարողություններ: Ուսումնական տարվա ընթացքում կայցելեն թանգարաններ, տարբեր տեսարժան վայրեր, կանցկացվեն տարաբնույթ էլեկտրոնային դասեր, որոնք իրենց մեջ կունենան և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական բնույթ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն – Հայեցի դաստիարակության համար մեծ դեր ունի տվյալ երկրի պատմությունն ու մշակույթը: Երեխաներին պետք է հաղորդակից դարձնել իր ժողովրդի անցյալին, մշակութային ժառանգությանը և մերօրյա կատարվող իրադարձություններին: Այս նպատակով

կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Պետք է աշակերտներին հնարավորություն տալ ազատ մտածել, ստեղծագործել, գեղանկարչական հմտություններ ձեռք բերել: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Հաճախակի պետք է այցելել մանկական պատկերասրահներ, թանգարաններ, տեսնել հասակակիցների ստեղծագործությունները: Ճանաչել, հասկանալ և գնահատել ազգայինը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն – Սերը դեպի հայրենիքը՝ քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է: Ոչ թե խոսքերով, այլ գործով պետք է ցույց տաս քո հայրենասիրությունը: Բոլորը պետք է դասեր քաղեն 44-օրյա պատերազմից և ճիշտ հասկանան թե ի՞նչ է հայրենիքը: Ստով հայրենիք չես փրկի: Պետք է հնարավորինս լավ զինվել, կազմակերպել տարաբնույթ քննարկումներ: Ներկայացնել ներկայիս հերոսներին և նրանց քաջագործություններին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն - Ֆիզիկական դաստիարակությունը կրթության անբաժանելի մասն է և նպատակաուղղված է անձի բազմակողմանի, ներդաշնակ զարգացմանը, շարժողական ունակությունների և հմտությունների մշակմանը, կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորմանը: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:Կազմակերպել տարբեր միջոցառումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն - Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Երեխաները պարտավոր են իրենց տարիքին համապատասխան աշխատանքներ կատարեն տանը, դպրոցում: Մասնակցելով տարաբնույթ աշխատանքների, ձեռք կբերեն նոր կարողություններ և հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն -Բնությունը հրաշք է իր բնական երևույթներով: Անհրաժեշտ է օգնել աշակերտներին՝ տեսնել, հասկանալ և գնահատել այն:

Բնությունից մարդը շատ բան է վերցնում, բայց պետք է այն պահպանել և ուշադիր լինել: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Բնության հետ շփումը նպաստում է բարոյական, դրական որակների ձևավորմանը:

4. Դպրոց-ընտանիք կապը – Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև,եթե ծնողներն ու դպրոցը համագործակցում են,ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է: Ծնողները պետք է ընդգրկվեն իրենց երեխաների կրթության գործին, մասնակցեն դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, սեմինարներին: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն ,որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտներն ավելի լավ սովորեն:

2023-2024 ուստարում դասղեկի աշխատանքի պլան (32 շաբաթ)

1. <<Մենք գնում ենք դպրոց>>
2. <<Սանիտարահիգենիկ կանոններ>>
3. <<Անկախության օր>>
4. <<Իմ ընկերը>>
5. <<Ուսուցիչ իմ թանկագին>>
6. <<ՀՀ պետական խորհրդանիշներ>>
7. <<Էկոլոգիական խնդիրներ>>
8. <<Պոլիէթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>>
9. <<Մեր փոքրիկ բարեկամները` կենդանիները>>
10. <<Ես էլ քեզ նման եմ>>
11. <<Երթևեկության կանոնները>>
12. <<Բնական աղետներ>>
13. <<Կարող եմ օգտակար լինել>>
14. <<Ազգային տոներ>>
15. <<Ծուտով Ամանոր է>>
16. <<Եկեղեցին և ազգը>>
17. <<Հայոց բանակի օրը>>
18. <<Մայրության և գեղեցկության տոն>>
19. <<Ազնվություն և անկեղծություն>>
20. <<Գրքի տոն>>
21. <<Իրավունքներ և պարտականություններ>>
22. <<Մայրության և գեղեցկության տոն>>
23. <<Բարև,՜գարուն>>
24. <<Ասացվածքի ամբիոն>>
25. <<Ճիշտ սնվել ու իմ տարբերակը>>
26. <<Ծույլ աշակերտը>>
27. <<Հանելուկներ>>
28. <<Հայոց Մեծ եղեռն>>
29. <<Իմ անունը>>
30. <<Ինչ եմ ուզում դառնալ>>
31. <<Ինչ սովորեցի այս տարվա ընթացքում>>
32. <<Էքսկուրսիա բնության գիրկ>>

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԻ

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակություն | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| | <<Մենք գնում ենք դպրոց>> Զրույց՝ ինչպե՞ս եմ անցկացրել ամառային արձակուրդները: | դասվար աշակերտ | |
| | Սանիտարական կանոնների և մաքրության պահպանումը դասասենյակում: | դասվար աշակերտ | |
| | Անկախության օր:Խոսել տոնի և նրա կարևորության մասին | դասվար աշակերտ | |
| | Իմ ընկերը: Շարադրություն | դասվար աշակերտ | |
| | << Ուսուցիչ իմ թանկագին>> Բացիկներ և բարեմաղթանքներ | դասվար աշակերտ | |
| | <<ՀՀ պետական խորհրդանիշեր>> թեմայով զրույց՝ դրոշ, զինանշան, օրհներգ: | դասվար աշակերտ | |
| | Էկոլոգիական խնդիրները մեր գյուղում՝ Ծափաթաղում | դասվար աշակերտ | |
| | <<Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>>: Առաջադրել լուծումներ այդ խնդրին | դասվար աշակերտ | |
| | Մեր փոքրիկ բարեկամները՝ կենդանիները: Ընտանի և վայրի կենդանիները: Պաստառի ձևավորում | դասվար աշակերտ | |
| | Ես էլ քեզ նման եմ: Ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: | դասվար աշակերտ | |
| | <<Երթևեկության կանոնները>> Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները: | դասվար աշակերտ | |
| | Բնական աղետներ: Ինչպե՞ս վարվել բնական աղետների ժամանակ: | դասվար աշակերտ | |
| | <<Կարող եմ օգտակար լինել >>: Աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ | դասվար աշակերտ | |
| | Ազգային տոներ: Ներկայացնել ազգային տոների առանձնահատկությունները | դասվար աշակերտ | |

| | | | |
|---|---|---|---|
| | Շուտով Ամանոր է:<br>Ամանորյա փոքրիկ միջոցառում | դասվար<br>աշակերտ | |
| | Եկեղեցին և ազգը<br>Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում: | դասվար<br>աշակերտ | |
| | Հայոց բանակի օր:<br>Ճանաչել մերօրյա հերոսներին և նրանց սխրանքները: | դասվար<br>աշակերտ | |
| | <<Վատ սովորույթներ>><br>Զրույց՝ ինչպե՞ս պայքարել վատ սովորույթների դեմ | դասվար<br>աշակերտ | |
| | <<Ազնվություն և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում>> | դասվար<br>աշակերտ | |
| | <<Գրքի տոն>><br>Ինչ խորհուրդ ունի միմյանց գիրք նվիրելը | դասվար<br>աշակերտ | |
| | Իրավունքներ և պարտականություններ: | դասվար<br>աշակերտ | |
| | Մայրության և գեղեցկության տոն:<br>Պատրաստել բացիկներ | դասվար<br>աշակերտ | |
| | Բարև գարուն:<br>Քայլել բնության գրկում | դասվար<br>աշակերտ | |
| | <<Ասացվածքի ամբիոն>> Պաստառի ձևավորում: | դասվար<br>աշակերտ | |
| | Ճիշտ սնվելու իմ տարբերակը:<br>Հաղորդաշարի դիտում սննդաբանի կողմից: | դասվար<br>աշակերտ | |
| | << Ծույլ աշակերտը>> մուլտֆիլմի դիտում, քննարկում | դասվար<br>աշակերտ | |
| | <<Հանելուկներ>><br>Հանելուկների ընթերցում, գուշակում | դասվար<br>աշակերտ | |
| | <<Հայոց Մեծ Եղեռն>><br>Զրույց ցեղասպանության մասին: | դասվար<br>աշակերտ | |
| | Իմ անունը:<br>Իմ անվան ծագումնաբանական նշանակությունը | դասվար<br>աշակերտ | |
| | Ինչ եմ ուզում դառնալ:<br>Շարադրություն | դասվար<br>աշակերտ | |
| | Ինչ սովորեցի այս տարվա ընթացքում:<br>Զրույց աշակերտների ձեռքբերումների մասին: | դասվար<br>աշակերտ | |
| | Էքսկուրսիա դեպի բնության գիրկ: | աշակերտներ,<br>ծնողներ,<br>դասղեկ | |